25 սեպտեմբերի 2014 թ. N 630-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի N 438-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 15-ի «2014 թվականին կարկտահարությունից տուժած հողօգտագործողներին պետական աջակցություն տրամադրելու մասին» N 438-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) որոշման 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ ենթակետով.

«5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի համայնքներում կարկտահարությունից հիսուն և ավելի տոկոսով ոչնչացած աշնանացան և գարնանացան մշակաբույսերի ցանքատերերին (հողօգտագործողներին) յուրաքանչյուր հեկտարի դիմաց, որպես պետական աջակցություն, անհատույց տրամադրել 150 (հարյուր հիսուն) կիլոգրամի չափով գարի՝ ըստ համայնքների՝ համաձայն N 4 հավելվածի:».

2) որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

3) որոշումը լրացնել նոր՝ N 4 հավելվածով՝ համաձայն N 2 հավելվածի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության

2014 թվականի սեպտեմբերի 25-ի
N 630-Ա որոշման

«Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի հուլիսի 15-ի
N 438-Ա որոշման

Ց Ա Ն Կ

Ասկերանի շրջանում կարկտահարությունից 50-100% տուժած համայնքների

Հ/հ	Համայնքը	50-100 % տուժած տարածքը (հեկտար)	Գարու քանակը (կիլոգրամ)
1	Ակնաղբյուր	164.3	24645
2	Աստղաշեն	37.3	5595
3	Ավետարանոց	40.0	6000
4	Խաչմաչ	28.5	4275
5	Խնձրիստան	183.33	27499.5
6	Ծաղկաշատ	7.0	1050
7	Կարմիր գյուղ	65.0	9750
8	Հիլիս	89.64	13446
9	Մադաթաշեն	44.0	6600
10	Մոշխմհատ	27.0	4050
11	Նորագյուղ	169.45	25417.5
12	Ներքին Սզնեք	45.0	6750
13	Սարուշեն	208.18	31227
14	Պատարա	2.3	345
15	Ջրաղացներ	32.0	4800
ԸՆԴԱՄԵՆԸ		***1143.0***	***171450***

» :

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի սեպտեմբերի 25-ի
N 630-Ա որոշման

«Հավելված N 4
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի հուլիսի 15-ի
N 438-Ա որոշման

Ց Ա Ն Կ

Մարտունու շրջանում կարկտահարությունից 50-100 % տուժած համայնքների

Հ/հ	Համայնքը	50-100 % տուժած տարածքը (հեկտար)	Գարու քանակը (կիլոգրամ)
1	Կոլխոզաշեն	4.82	723
2	Խերխան	3.79	568.5
3	Ծովատեղ	10.0	1500
4	Ղուզե Ճարտար	102.1	15315
5	Ճարտար	105.35	15802.5
6	Սոս	53.94	8091
7	Կարմիր Շուկա	17.0	2550
8	Շեխեր	55.06	8259
9	Թաղավարդ	43.8	6570
10	Ջիվանի	110.9	16635
11	Սարգսաշեն	47.4	7110
12	Զարդանաշեն	36.9	5535
13	Քարահունջ	1.3	195
14	Մաճկալաշեն	13.0	1950
ԸՆԴԱՄԵՆԸ		***605.36***	***90804.0***

» :

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**